Կոնցեռն Դիալոգ

Հասցե՝ Չարենցի 1, 207 սենյակ,
0025 Երևան, Հայաստան

Հեռ.՝ +374 60 27 88 88
Էլ. հասցե՝ info@dialog.am

19 հունիսի 2026 թ.

Սահմանադրական դատարանին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պողոտա 10

Դիմումատու՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԿՍ)
(պետական գրանցման համարը՝ 211.172.02701, ՀՎՀՀ՝ 01235078,
Գրանցման հասցե՝ ՀՀ, Երևան, Ծովակալ Իսակովի 9 շենք)

Դիմումատուի ներկայացուցիչներ՝
Արամ Սմբատի Օրբելյան,
Կոնցեռն Դիալոգ ՓԲ ընկերություն,
Փաստաբանական գործունեության արտոնագիր՝ թիվ 948
ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AL 0684473,
տրված 25.03.2024 թվականին, 067-ի կողմից
Բնակության հասցե՝ ք. Երևան, Ծարավ Աղբյուր փ. 55/5 շ, բն 101
Էլ. փոստ՝ aram.orbelyan@dialog.am, բջջ.՝ +374 93 662726

Վահե Հաքարի Գրիգորյան
Բնակության հասցե՝ ք. Երևան, Քըրք Քըրքորյան 21/5 շ, բն 33
Էլ. Փոստ՝ vahe.grigoryan@novalex.am, բջջ +374 43 066806

Դիմողի ծանուցման հասցե՝ ք. Երևան, Չարենցի 1, 207 գրասենյակ

Պատասխանող՝
ՀՀ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով
Հասցե՝ ք. Երևան, Գևորգ Քոչարի փ. 21Ա
Էլ. Փոստի հասցե՝ cec@elections.am

Դիմում

(Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով [Կենտրոնական Ընտրական հանձնաժողովի] ընդունված որոշումների հետ կապված վեճերը լուծելու պահանջի մասին)

Բա՛րձր Դատարան,

Օգտվելով Սահմանադրության **169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ** կետով տրված իրավունքից և հաշվի առնելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով Սահմանադրական դատարանին տրված լիազորությունը, ներկայանում ենք «Բարգավաճ Հայաստան» կուսակցության (այսուհետ՝ **Դիմող**) դիմումը՝ լուծելու Ազգային ժողովի 2026թ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 3-73
«19» 06 2026 թ.

ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումները՝ անվավեր ճանաչելով ՀՀ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի՝ 14-06-2026թ կայացված «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները վերաբերյալ» 258-Ա և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» 259-Ա որոշումները:

Բարձր դատարանին հայտնում ենք նաև, որպես **Դիմողի ներկայացուցիչներ ՀՀ Սահմանադրական դատարանում հանդես են գալիս Արամ Սմբատի Օրբելյանը, Վահե Զաքարի Գրիգորյանը, Էլինար Սուրիկի Վարդանյանը:**

Դիմումում հիմնավորում ենք, որ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը (այսուհետ՝ **ԿԸՀ**) 2026 թ. հունիսի 14-ի *Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին 259-Ա որոշումը*, ինչպես նաև դրա ընդունման համար հիմք հանդիսացած և դրա ընդունմանը նախորդող այլ որոշումները (ներառյալ 2026 թ. հունիսի 14-ի *Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքների վերաբերյալ 258-Ա*

և այլ որոշումները) ընդունել է

- օրենքի խախտմամբ, այդ թվում նաև օրենքի սխալ կիրառման և սխալ մեկնաբանման հետևանքով, ներառյալ
- օրենքի՝ Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ, ինչպես նաև
- հիմնավորում ենք, որ ԿԸՀ-ն, իր իսկ կողմից հաստատած հանգամանքներում պետք է ընդուներ այլ որոշում,
- ինչպես նաև առկա տվյալներով, ապացույցներով և փաստաթղթերով, ընդհանրապես, ԿԸՀ-ն պետք է ընդուներ այլ որոշում,

ինչպես նաև հիմնավորում ենք, որ նշված սխալները ուղղակիորեն ազդել են ընտրությունների արդյունքների վրա ընդհանրապես և **Դիմողի իրավունքների վրա մասնավորապես, ներառյալ,** նշված սխալները թույլ չտալու դեպքում ԿԸՀ-ն կեզրահանգեր, որ *ընտրախախտումները ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները,* ինչի արդյունքում կընդուներ այլ որոշում (Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու և ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին) կամ առնվազն Ազգային ժողով ընտրվելու և մանդատների բաշխման որոշմամբ կսահմաներ նաև Դիմողի (ԲՀԿ) կողմից անցողիկ շեմը հաղթահարելը և կսահմաներ Դիմողին հասանելիք մանդատների թիվը (5 մանդատ):

էջ 2 ընդհանուր 27 էջից

Կոնցեռն Դիալոգ

I. Բողոքի քննության համար էական հանգամանքները

1.1. Դիմողը հանդիսանում է ՀՀ-ում գրանցված կուսակցություն, որը մասնակցում էր Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին:

1.2. Նախընտրական քարոզչության ընթացքում 2026թ մայիսի 20-ին, Քաղաքացիական պայմանագիր կուսակցության կողմից գրանցված պատգամավորի թեկնածու, ՀՀ Վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ հաջորդ օրը ԱԱԾ-ն (վարչապետին ենթակա մարմին) հաղորդում է ներկայացնելու քննչական կոմիտեին Անդրանիկ Թևանյանի (ԲՀԿ ընտրական ցուցակի երկրորդ համար) նկատմամբ քրեական հետապնդում նախաձեռնելու մասով, իսկ դրա հաջորդ օրը արդեն Անդրանիկ Թևանյանի մասով նախաքննական մարմինը դիմում է ԿԸՀ՝ քրեական հետապնդում նախաձեռնելու և ազատությունից զրկելու հարցով համաձայնություն ստանալու համար: **ԿԸՀ-ն առանց պարզաբանելու համաձայնություն տալու գործընթացի շրջանակներում քննարկման ենթակա հարցերը, ապացուցման առարկան և գործընթացի էությունը**, ի պատասխան բոլոր փաստարկներին (իրավական, քաղաքական, ընտրությունների վրա ազդեցության գնահատման և այլն) «պարզաբանում» է, որ այդ հարցերը իրենց իրավասությունից դուրս են, տալիս է համաձայնություն (չպատճառաբանված որոշմամբ)[1]:

1.3. 2026թ մայիսի 23-ին Անդրանիկ Թևանյանը կալանավորվում է՝ զրկվելով նախընտրական քարոզչությանը անձնապես ներգրավված լինելու գործուն և արդյունավետ հնարավորությունից: Ընտրարշավի ժամանակ բազմաթիվ ելույթներում, խախտելով Անդրանիկ Թևանյանի անմեղության կանխավարկածը արվել են պնդումներ նրա՝ «պետական դավաճան» լինելու մասով:

1.4. Ավելին, ՔՊ ցուցակի առաջին համարը և վարչապետի պաշտոն զբաղեցնող անձը նաև շարունակելով է հարցի քննարկումը, պնդումներ անելով Գագիկ Ծառուկյանի կողմից Անդրանիկ Թևանյանին այլ երկրի հատուկ ծառայությունների պահանջով ներառելու մասով, ինչի հետ կապված այս պահին պատվի և արժանապատվության հայց է քննարկվում դատարանում: Այսպես, 2026թ մայիսի 28-ին, **օգտագործելով իր՝ վարչապետի պաշտոնը զբաղեցնելու հանգամանքը**, ոչ քարոզարշավի ընթացքում, սակայն նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում, լրագրողների հետ Կառավարական 1-ին տանը լրագրողների հետ հարցազրույցի ժամանակ որպես ՀՀ Վարչապետ հանդես եկող Նիկոլ Փաշինյանը, հաստատելով, որ նկատի ունի Գագիկ Ծառուկյանին, հայտարարել է, որ

> *«օտարերկրյա հատուկ ծառայության ցուցումով ա ինքը Անդրանիկ Թևանյանին ներառել իր ցուցակ, ինքը գործակալ ա ... հանցագործ ... հեսա քեզնով էլ կզբաղվենք, Ծառուկյան Գագիկ, պատրաստվի, Արարատ*

---

[1] Նմանատիպ ընթացակարգով համապատասխան որոշումներ տրվել են ԿԸՀ-ի կողմից սույն ընտրությունների ընթացքում բոլոր այլ թեկնածուների մասով դիմումներին ի պատասխան:

ցեմենտը սեփականա ... պետականացնում ենք ու էդ հանցավոր գործարքի համար դու ու խնամիդ պատասխանատվություն եք կրելու Հայաստանի ժողովրդին թալանելու համար, և պատրաստվի, որ դրյակդ էլ դառնալու ա ծերերի խնամքի կենտրոն մինչև 2031թ, ես Հայաստանի ընտրողների առաջ դա խոստանում եմ. առյուծը՝ չգիտեմ, բայց դու պատրաստվի որ վանդակում ես ապրելու առաջիկա տասնամյակներում, հետ էլ որջ կլինի անպայման, խոստանում եմ»[2]:

1.5. ԿԸՀ-ն որևէ կերպ չի արձագանքել ատելության խոսքի և վարչական ռեսուրսի կիրառման նշված դեպքերին և վերջնական ակտով սխալ է գնահատել նշված (և բազմաթիվ այլ՝ ներառյալ «Ուժեղ Հայաստան» դաշինքի և «Միասնության Թևեր» կուսակցության կողմից ԿԸՀ ներկայացրած դիմումներում նկարագրված բազմաթիվ այլ նման դեպքերի նկարագրություններին / ընտրախախտումներին, և համարել է որ նշված խախտումները չեն ազդել արդյունքների վրա:

1.6. 2026 թ. հունիսի 18-ին որպես վարչապետ լրագրողների հարցերին պատասխանելիս պարզաբանել է (մեջբերում)

*«... Էն մարդը որը տիրապետում ա ինֆորմացիայի, ունի լծակներ նաև այդ ինֆորմացիան օգտագործելու, և ինքն ա որոշում... ԱԱԾ-ն ուրիշ գաղտնիք էլ ա հրապարակել, հրապարակել ա, օրինակ, Անդրանիկ Թևանյանի... բանները... գործողությունները: Ինքը **որոշում ա, երբ հրապարակի, երբ չհրապարակի**, ինչ պրոբլեմ կա...»*[3]

Նշվածից ակնհայտ է, որ **ընտրություններից մասնակիցներից առնվազն մեկը՝ ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը տիրապետել է վարչական լծակների՝ ԱԱԾ-ի ն հանձնարարություններ տալու և ԱԱԾ-ի միջոցով, իբր թե ընտրակաշառք տալու և ստանալու և այլ հանցագործությունների դեմ պայքարի տակ քողարկելով գաղտնալսել է քաղաքական հակառակորդներին ստանալով անհամաչափ առավելություն: Ավելին, նաև թույլ է տվել Դատարանների հանդեպ արատավորող պնդումներ, վիրավորական արտահայտություններ է կիրառել ընդդիմադիր ուժերի հետևորդների մասով (շուն-շանգյալ, կաշառակեր և այլն), ինչպես նաև փաստացի միջամտել է քրեական հետապնդումների հարուցման և դատավարական գործընթացներին:**

Սրանից զատ՝

---

[2] https://www.youtube.com/watch?v=ZIsO03voaEs (4:12 րոպեից)

[3] https://www.youtube.com/live/3jHUymShlnU?si=5AkT4QodIr0tT6or (27:20 րոպեից)

1.7. Ըստ ԿԸՀ 2026 թ. հունիսի 07-ի արձանագրության՝ Ընտրողների ընդհանուր թիվը ՀՀ-ում կազմում է 2 507 216 անձ, քվեարկությանը մասնակցել է 1 477 736 անձ, անվավեր է համարվել 17 097 քվեաթերթիկ, անճշտությունների թիվը կազմել է 1 279, Դիմողը ստացել է 58 378 կողմ քվեաթերթիկ, կամ ընտրողների ձայների 3,996% տոկոսը:

1.8. 27/7, 27/26, 12/49, 12/20, 4/46, 38/53, 23/5, 9/06, 9/25, 25/34, 4/43, 20/42, 12/50, 25/6, 25/4, 8/26, 12/28, 4/03 ընտրատեղամասերում վերահաշվարկի արդյունքում Դիմողին կողմ քվեարկած վավեր քվեաթերթիկների թիվը ավելացել է 139-ով, իսկ 21/04, 21/05, 21/34, 21/35, 21/12, 12/54, 11/6 ընտրատեղամասերում վերահաշվարկի արդյունքում Դիմողի օգտին քվեարկած ձայների թիվը պակասել է 8-ով:

1.9. Վերահաշվարկի արդյունքում ԿԸՀ-ն արձանագրել է, որ **ԲՀԿ-ն ստացել է 58 525 քվե, իսկ կողմ քվեների և անճշտությունների հանրագումարը կազմել է 1 461 742: Նշված թվի 4 տոկոսը (անցողիկ շեմը) կազմել է 58 470, այսինքն վերահաշվարկի արդյունքում ԲՀԿ-ն 55 ձայնով գերազանցել է շեմը (ստացել է 4.00378 տոկոս):**

1.10. 2026թ հունիսի 11-ին, անմիջապես այն բանից հետո, երբ պարզ է դառնում որ ԲՀԿ-ի ձայները բավարարում են 4 տոկոսի շեմը հաղթահարելու համար, ԿԸՀ-ն՝ չունենալով նման լիազորություն, ընդունել է 35/65 և 10/51 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին որոշումներ (254-Ա և 255-Ա որոշումներ). 10/51 ընտրական տեղամասում Դիմողի օգտին գրանցվել է **131 կողմ** քվեաթերթիկ իսկ 35/65 ընտրական տեղամասում Դիմողի օգտին գրանցվել է **82 կողմ** քվեաթերթիկ, **որոնք ԿԸՀ 254-Ա և 255-Ա որոշումներով գրանցվել են որպես անճշտություն, այսինքն՝ Դիմողի օգտին քվեարկած ձայների թիվը պակասել է 213-ով:**

1.11. ԿԸՀ-ն 35/65 և 10/51 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները անվավեր է ճանաչել այն հիմնավորմամբ, որ

> *«Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության օրը. 2026թ հունիսի 7-ին թիվ 35/65 ընտրական տեղամասում (մյուս որոշմամբ՝ թիվ 10/51) քվեարկության արդյունքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող են **էապես ազդել քվեարկությունների արդյունքների վրա**, և հնարավոր չէ պարզել թիվ 35/65 ընտրական տեղամասում (մյուս որոշմամբ՝ թիվ 10/51) քվեարկության օրինական, իրական արդյունքները»:*

1.12. ԿԸՀ որոշումները՝ 10/51 և 35/65 ընտրական տեղամասերի արդյունքները անվավեր ճանաչելու վերաբերյալ, վիճարկվել են ՀՀ Վարչական դատարանում ՎԴ/9914/05/26 և ՎԴ/9914/05/26 գործերի շրջանակներում: Երկու գործով էլ **դատարանների կողմից Ընտ-**

ական Օրենսգրքի 48.1 հոդվածին հակասահմանադրական մեկնաբանություն տալու պայմաններում՝ բողոքները մերժվում են:

1.13. ***Զուգահեռաբար ՎԴ/9915/05/26*** գործով Դատարանը նաև արձանագրել է

«...Կենտրոնական ընտրական հանձնաժողովն Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների ամփոփման փուլում <u>ստիպված է լինելու</u> իր որոշմամբ (սույն գործով վիճարկվող) արձանագրված խախտումների լույսի ներքո ընդունել որոշում առանձին ընտրական տեղամասում վերաքվեարկություն անցկացնելու մասին:»

1.14. 2026 թ. հունիսի 14-ին ամփոփելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների արդյունքները, ԿԸՀ-ն, չնայած Ընտրական Օրենսգիրք Սահմանադրական օրենսգրքի 95 և 101 հոդվածների կարգավորումների և դատական ակտում տրված մեկնաբանությանը, ինչպես նաև դրանով պայմանավորված Դիմողի դիմումին (**ինչի ներկայացման համար ժամկետ սահմանված չի ընդհանրապես**), քվեարկությունների արդյունքները անվավեր ճանաչված ընտրական տեղամասերի վերաբերյալ չի կայացրել վերաքվեարկություն իրականացնելու մասին որոշումը և 58 287 կողմ քվեարկություն արձանագրելով Դիմողի օգտին, որոշել է, որ վերջինս չի հաղթահարում «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 95-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված 4%-ի շեմը, և հետևաբար չի մասնակցում մանդատների բաշխմանը:

1.15. ԿԸՀ-ի կողմից արդյունքների ամփոփման արդյունքում ակնհայտ է դառնում, որ Դիմող կուսակցության պակասում էր **153 կողմ** քվեաթերթիկ Ազգային ժողովում ներկայացված լինելու և մանդատների բաշխմանը մասնակցելու համար, որը վերջինս կունենար, եթե ԿԸՀ որոշումներով 10/51 և 35/65 ընտրական տեղամասերի արդյունքները անվավեր ճանաչված չլինեին և ողջամտորեն կարող էր ունենալ, եթե ԿԸՀ-ն կայացներ որոշում, որով 10/51 և 35/65 ընտրական տեղամասերում կիրականացվեր վերաքվեարկություն:

1.16. **Ոչ 258-Ա, ոչ 259-Ա, ոչ էլ ԿԸՀ որևէ որոշում չի պարունակում պատճառաբանություն և հիմնավորումներ առ այն, թե ինչու նշված ընտրատարածքների քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելը չի ազդում ընտրության արդյունքների վրա, երբ նման ազդեցությունը ակնհայտ է (<u>մինչև որոշումը ԲՀԿ-ն անցնում է շեմը, իսկ որոշման արդյունքում ոչ</u>)**

1.17. 2026 թ. հունիսի 15-ին ՀՀ ԿԸՀ կայքում տեղադրվել է ԿԸՀ նախագահի հրապարակումը (**որևէ սակայն չի կարող համարվել պատշաճ որոշում կամ պատճառաբանություն, և նշված հրապարակումը չի հանդիսանում Պատասխանողի՝ ԿԸՀ-ի որոշում կամ այլ ակտ)**՝ հետևյալ վերտառությամբ «**ՀՀ ԿԸՀ կողմից 3 տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուց հետո վերաքվեարկություն չնշանակելու վերաբերյալ**» և հետևյալ բովանդակությամբ

«Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որևէ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուց հետո չպետք է ավտոմատ կերպով նշանակի վերաքվեարկություն: ԿԸՀ-ն այդ որոշումը կայացնելիս պետք է հաշվի առնի ընտրողների իրական կամքի պաշտպանությունը և ընտրությունների արդյունքի օրինականության ապահովումը: Այդ պատճառով ԿԸՀ-ն պետք է ընտրի այն միջոցը, որը տվյալ պայմաններում անհրաժեշտ է, համաչափ է և չի առաջացնում ավելի մեծ աղավաղում, քան այն խախտումը, որի հետևանքը պետք է վերացվի:

Մասնակի վերաքվեարկության դեպքում առաջանում է հետևյալ խնդիրը: Հիմնական քվեարկությանը մասնակցած ընտրողները քվեարկել են այն պահին, երբ ընդհանուր արդյունքը հայտնի չէր: Նրանք չգիտեին՝ ով է առաջատար, քանի ձայնի տարբերություն կա, որ ուժը կհաղթահարի շեմը կամ իրենց քվեն ինչ ազդեցություն կունենա վերջնական արդյունքի վրա:

Մինչդեռ վերաքվեարկության մասնակից ընտրողները քվեարկելու են արդեն այլ իրավիճակում. նրանց համար կարող է հայտնի լինել ընդհանուր պատկերը (տվյալ դեպքում ընտրությունների մասնակիցների 99,8 տոկոս):

Այս պայմաններում ընտրողի կամքը կարող է ձևավորվել ոչ թե իր սկզբնական քաղաքական նախապատվությամբ, ազատ կամարտահայտությամբ, այլ արդեն հայտնի արդյունքը խմբագրելու հաշվարկով: Այս ռիսկը սովորաբար բնութագրվում է որպես տակտիկական քվեարկություն (tactical voting):

Վենետիկի հանձնաժողովը ևս ընդունել է, որ մասնակի վերաքվեարկությունը միշտ չէ, որ պատշաճ միջոց է: ***2025 թվականի հրատապ զեկույցում նշվում է, որ եթե խախտումները վերաբերում են միայն որոշ տեղամասերի, ապա արձագանքը սկզբունքորեն կարող է սահմանափակվել այդ տեղամասերով:*** *Սակայն նույն մոտեցումը ունի կարևոր բացառություն. մասնակի վերաքվեարկությունը չի կարող պատշաճ միջոց լինել, եթե այդ տեղամասերում նոր քվեարկությունը, տակտիկական քվեարկության (tactical voting) հնարավորության պատճառով, չի երաշխավորի արդար ընտրական արդյունք:*

Հավասար ընտրական իրավունքի տեսանկյունից ևս խնդիրը ակնհայտ է: Վերաքվեարկությունը կարող է խախտել ընտրողների հավասարությունը, քանի որ ընտրողների մեկ խումբը հայտնվում է մյուսներից էապես տարբեր ելակետային պայմաններում:

Այս հարցում կարևոր է նաև ՀՀ սահմանադրական դատարանի մոտեցումը, ըստ որի՝ ընտրական խախտումների հետևանքները գնահատելիս պետք է

պաշտպանել նաև այն ընտրողների իրավունքները, որոնք իրենց ընտրությունը կատարել են օրինական ճանապարհով: ***Եթե հիմնական քվեարկությանը մասնակցած ընտրողների կամքն արդեն օրինական ձևով արտահայտվել է, ապա հետագա վերաքվեարկությունը չպետք է երկրորդային և հաշվարկված ազդեցություն ունենա այդ կամքի վրա:***

Հետևաբար ***ԿԸՀ-ն վերաքվեարկություն նշանակելու հարցում պետք է հաշվի առնի նաև, թե արդյո՞ք վերաքվեարկության ժամանակ ապահովվելու է նույն ազատ և հավասար միջավայրը, ինչ հիմնական քվեարկության օրը: Արդյո՞ք հայտնի արդյունքը չի ստեղծում տակտիկական քվեարկության ռիսկ: Արդյո՞ք չեն խաթարվի արդեն օրինական քվեարկած ընտրողների իրավունքները: Արդյո՞ք ապօրինի կամ կոռուպցիոն ազդեցության աղբյուրները չեզոքացված են:***

Եթե այս հարցերի պատասխանը ցույց է տալիս, որ վերաքվեարկությունը չի ապահովելու ազատ, հավասար և արդար արդյունք, ապա այն չպետք է նշանակվի: Վերաքվեարկություն չնշանակելը նման դեպքում չի նշանակում խախտումը անտեսել: Դա նշանակում է չընտրել այնպիսի միջոց, որը կարող է ավելի խորացնել ընտրողների կամքի աղավաղումը:

ԿԸՀ-ն պետք է առաջնորդվի *ոչ թե մեխանիկական վերաքվեարկության տրամաբանությամբ, այլ Սահմանադրությամբ երաշխավորված* ***ազատ և հավասար ընտրության, համաչափության և ընտրողների իրական կամքի պաշտպանության սկզբունքներով՝ որպես Սահմանադրությամբ ընտրությունների օրինականությունը վերահսկող անկախ մարմին:»:***

1.18. Պատասխանողը հիմք է ընդունել Հեռուստատեսության և Ռադիոյի հանձնաժողովի (այսուհետև՝ **ՀՌՀ**) եզրակացությունը (*2026 թ. հունիսի 12-ի թիվ 69-Ա Տեսալսողական մեդիածառայություն մատուցողները կողմից Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ իրականացված մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը հրապարակելու մասին որոշում*), սակայն չի անդրադարձել դրանում արձանագրված ազատության և հավասարության սկզբունքների խախտմանը: Մասնավորապես ՀՌՀ-ն իր վերջնական եզրակացությամբ արձանագրել է[4], որ

«Տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տրամադրած

[4] https://tvradio.am/wp-content/uploads/2026/02/69-%D4%B1.pdf

եթերաժամի ***արձանագրված անհամաչափությունը*** *չի կարող գնահատվել որպես նախընտրական քարոզարշավին մասնակցող քաղաքական ուժերի համար* ***հավասար պայմանների ապահովման սկզբունքի խախտում****: Միաժամանակ,* ***հավասար պայմանների ապահովման սկզբունքի խախտում պետք է դիտարկել*** *լրատվական հաղորդման ընթացքում կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվության ներկայացման պահանջի խախտման՝ Հանձնաժողովի կողմից արձանագրված դրվագները, որոնց տրվել է համապատասխան իրավական գնահատական: Լրատվական թողարկումներում անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվության ներկայացման օրենսդրական պահանջի խախտումը հանգեցնում է ընտրական օրենսդրության հիմնարար սկզբունքներից մեկի՝ 80 կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև* ***հավասարության սկզբունքի խախտմանը****, քանի որ կողմնակալ լուսաբանումը կամ ոչ օբյեկտիվ գնահատականները հասարակության համար ձևավորում են կանխակալ պատկերացումներ՝* ***խաթարելով ազատ և հավասար մրցակցային միջավայրը****:»:*

ԿԸՀ-ն, ընտրությունների արդյունքները գնահատելիս, չի անդրադարձել (միայն վերաշարադրել է), ՀՌՀ Եզրակացությամբ արձանագրված **ազատության ու հավասար մրցակության խախտման փաստին**, մինչդեռ վերջինս պարտավոր էր քննարկել ու ինքնուրույն գնահատեր խախտումների ազդեցությունը ընտրությունների արյունքների վրա:

1.19. Քվեարկության օրը ընտրատեղամասերում արձանագրվել են կազմակերպչական բազմաթիվ խնդիրներ, նշվածից ամենաէականներից մեկը **Ծրարների լուսաթափանց լինելն է:**

1.20. Քվեարկությունից հետո հրապարակված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առկա է շոշափելի տարբերություն քվեարկության մասնակիցների քանակի մասով: Այսպես, արձանագրություններում նշված մասնակիցների քանակը մոտ 27 000-ով ավելին է մատյաններում առկա ստորագրությունների քանակից: Միևնույն ժամանակ տեխնիկական սարքավորման կողմից զորամասում հաշվառված ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը կազմել է 16738, իսկ էլեկտրոնային եղանակով քվեարկողների թիվը կազմել է 410, հետևաբար առկա է առնվազն մոտ 10 000-ի հասնող տարբերություն (ավել քվեաթերթիկ քան ստորագրություն:

1.21. Ավելին, խնդրահարույց է օտարերկրյա պետությունների ուղղակի միջամտությունը քարոզարշավին: Ոչ միայն Ֆրանսիայի և ԱՄՆ-ի նախագահների ուղղակի աջակցությունը կոնկրետ քաղաքական գործչին, այլ նաև այդ «աջակցությանը» հենց ՔՊ ցուցակի առաջին համարի կողմից անդրադարձ կատարելը (օրինակ հրապարակումներին շնորհա-

կալություն հայտնելը և նշվածը ընտրարշավում կիրառելը): Ընտրելու իրավունք չունեցող անձանց մասնակցությունը ընտրարշավին չի սահմանափակվում նշված երկու դեպքով, այլ ներառում է ԵՄ մի շարք պաշտոնատար անձանց նույնպես: **Նշվածը վարչական ռեսուրսի ակնհայտ չարաշահում է և ազատ և հավասար ընտրությունների սկզբունքի խախտում:**

II. Դիմողի փաստարկները 10/51 և 35/65 տեղամասերում ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու և վերաքվեարկություն չնշանակելու հարցի հետ կապված

1. ԿԸՀ-ն իրավասություն չուներ ընդունել 254-Ա և 255-Ա

Սահմանադրության 194-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

> *«4. Ընտրական **հանձնաժողովների համակարգը**, ընտրական **հանձնաժողովների լիազորությունները**, կազմավորման և գործունեության կարգը, գործունեության երաշխիքները սահմանվում են Ընտրական օրենսգրքով:»*

Նշվածից բխում է որ Սահմանադրական օրենքը պետք է նախատեսի հանձնաժողովների համակարգ և առանձին լիազորություններ, տարանջատի տարբեր հանձնաժողովների միջև, և հստակեցնի ԿԸՀ-ի և ընտրական հանձնաժողովների համակարգի բաղկացուցիչ մասերի հարաբերակցությունը: Նշվածից նաև բխում է, որ Ընտրական օրենսգիրքը պետք է հենց տարանջատի իրավասությունները այլ ոչ թե նախատեսի նույնանման գործառույթներով հիերարխիկ համակարգ՝ երբ «վերադասը» կարող է **իրականացնել** (ոչ թե վերանայել) «ստորադասի» լիազորությունները:

Ընտրական օրենսգրքի 48.1 հոդվածը, որը ԿԸՀ-ն կիրառել է իր 254-Ա և 255 որոշումներով՝ անվավեր ճանաչելով 10/51 և 35/65 տեղամասերում **քվեարկության արդյունքները** վերջինիս չի տալիս հնարավորություն նման որոշում կայացնելու, այլև սահմանափակում է ԿԸՀ լիազորությունները բացառապես Տարածքային ընտրական հանձնաժողովների **որոշումների վերանայմամբ**, ինչը մասնավորապես պետք է դրսևորվեր բացառապես վերաբերելի Տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից քվեարկության արդյունքների վրա ազդեցություն չունենալու վերաբերյալ որոշումների վերացմամբ՝ առանց ընտրական տեղամասի արդյունքներին անդրադառնալու, ինչի հիման վրա արդեն իսկ Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները կարող էինք ինքնություն անվավեր ճանաչել (կամ չճանաչել) քվեարկության արդյունքները, իսկ ԿԸՀ-ն կարող էր այդ հարցին անդրադառնալ արդեն իսկ նշված որոշումների (եթե կկայացվեր որոշում) վերանայման շրջանակներում, կամ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքները ամփոփելու մասին որոշումներով՝ կայացնելով Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը: Նշված մեկնաբանությունը համահունչ է Սահմանադրության 194-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումներին: Այնինչ ԿԸՀ-ն հոդվածը կիրառել է այն մեկնաբանությամբ, **որ**

իրավունք ունի Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի փոխարեն անվավեր ճանաչել (այն էլ առանց բողոքի՝ ինքնություն, իր հայեցողությամբ) քվեարկության արդյունքները, ինչը ակնհայտորեն դուրս է Սահմանադրական կարգավորումների շրջանակից: Դատարանները՝ մերժելով հայցերը Ընտրական օրենսգրքի 48.1 հոդվածին նույնպես տվել են նման լայն մեկնաբանություն, ինչէ հակասում է 194-րդ հոդվածի և Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված Օրինականության սկզբունքին:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ **Պատասխանողը ևս ընդունել է այս հանգամանքը**՝ իր 258-Ա որոշման 9-րդ էջում արձանագրելով, որ ընտրություններին մասնակցող «Ուժեղ Հայաստան» դաշինքի դիմումը ներկայացվել է ոչ իրավասու ընտրական հանձնաժողովին և ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացվել **միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով** իրավասու անձի կողմից՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն (նշված հանգամանքը մեզ հայտնի է դառել արդեն արդյունքների ամփոփման փուլում):

Վերոգրյալով ակնհայտորեն հիմնավորվում է, որ Պատասխանողը չի ունեցել լիազորություն անվավեր ճանաչելու ընտատեղամասի քվեարկության արդյունքները և Պատասխանողի լիազորությունները սահմանափակված են եղել բացառապես Ընտրատարածքային Ընտրական Հանձնաժողովի **որոշման վերանայմամբ**, իսկ ընտատեղամասի քվեարկության ժամանակ արձանագրված խախտումները ՏԸՀ որոշման վերանայումից (վերացումից) հետո ընտրությունների արդյունքների վրա հետևանքների իմաստով պետք է քննվեին Ընտրությունների արդյունքները ամփոփելու մասին ԿԸՀ որոշումներով (կամ Ընտրատարածքային հանձնաժողովի որոշումներով՝ նման բողոքի առկայության պայմաններում):

2. Ընտրական օրենսգրքի 48.1 հոդվածին տրվել է հակասահմանադրական մեկնաբանություն

Պատասխանողի կողմից կիրառված 48.1 հոդվածը՝ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ փաստորեն թույլ է տալիս ԿԸՀ-ին 6 ամսվա ընթացքում **Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի <u>փոխարեն</u> կայացնել քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու որոշումներ**, ինչպես նաև փաստացի հնարավորություն է տալիս վերանայել տեղամասային հանձնաժողովի որոշումները: Ինչպես նշվեց վերը դա հակասում է սահմանադրության 194-րդ հոդվածի կարգավորումներին (առ այն, որ պետք է գործի հանձնաժողովների համակարգ և լիազորությունները լինեն հստակ տարանջատված, և լիազորությունները պետք է սահմանվեն օրենքով): Սահմանադրության նշված հոդվածից և 6-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքից բխում է, որ

ցանկացած մեկնաբանություն որը **ընդլայնում է հանձնաժողովներից որևէ մեկի լիազորությունները հակասահմանադրական է:**

Նշվածից բխում է, որ 48.1-րդ հոդվածի՝ Սահմանադրությանն համահունչ մեկնաբանությունը պետք է նախատեսի/ենթադրի որ ԿԸՀ-ն չունի լիազորություն վերանայել քվեարկության արդյունքները: Ի լրումն նախորդ նշված հիմնավորվումների, սա ապացուցվում է նաև կիրառված հոդվածով սահմանված ժամկետով և դրանում ընտրական տեղամասի որոշումների վերանայման լիազորության բացակայությամբ, որից ուղղակիորեն հետևում է, որ ԿԸՀ-ն ընտրական տեղամասի՝ ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչման՝ խմբագրման լիազորություն չունի, քանի որ նախ բացակայում է նման դրույթը, և երկրորդ՝ նման պարագայում Ընտրական օրենսգրքի 48.1 հոդվածով սահմանված լիազորության իրականացման ժամկետով պայմանավորված կարող է ստեղծվել իրավիճակ, երբ ԿԸՀ-ն անգամ Սահմանադրական դատարանի՝ ընտրությունների արդյունքներով վեճերի վերաբերյալ որոշման հրապարակումից հետո (որը տեղի է ունենում ընտրությունների արդյունքները ամփոփելուց հետո գրեթե 20 օր անց) 3-4 ամիս անց անվավեր ճանաչի բազմահազար բնակիչներ ունեցող ընտրական տեղամասի արդյունքները, որի արդյունքում ստեղծվի ոչ լեգիտիմ և ոչ լեգալ, Սահմանադրությամբ հռչակված սկզբունքներին հակասող պետական կառավարման համակարգ: Ընդ որում՝ նման լիազորության առկայության դեպքում ԿԸՀ-ն փաստորեն կարող է 6 ամսվա ընթացքում ապալեգիտիմացնել ուղղակի ընտրությունների միջոցով ընտրվող ցանկացած մարմին և դրա աշխատանք՝ հանգեցնելով պետության անվտանգության իրավական բաղադրատարրի խախտման և անկայությունների:

Հաշվի առնելով նախորդ կետում վկայակոչված իրավական և փաստական հանգամանքները, ինչպես նաև վերոգրյալով պայմանավորված՝ ևս մեկ անգամ պնդում ենք, որ ԿԸՀ-ի կողմից կիրառված և ընտրությունների արդյունքների վրա ուղղակիորեն ազդած լիազորությունը և 48.1 հոդվածին Դատարանների կողմից տրված մեկնաբանությունը հակասում է Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված օրինականության սկզբունքին և Սահմանադրության 194-րդ հոդվածի 4-րդ մասին, քանի որ ԿԸՀ-ին՝ օրենքի չափազանց ընդարձակ մեկնաբանության արդյունքում տրվում է այնպիսի լիազորություն, որը Ընտրական օրենսգրքով իրեն տրված չէ:

3. **Դիմողի (և 58.500 քաղաքացու իրավունքները խախտվել են) պետական մարմնի՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից թույլ տրված իրավախախտման արդյունքում, ինչը հակասում է իրավունքի էությանը (պետական մարմնի սխալը չի կարող առաջացնել բացասական հետևանք մասնավոր անձանց համար)**

Ակնհայտ է, որ քվեարկության արդյունքներն անվավեր են ճանաչվել ոչ դիմողի, ոչ էլ դիմողի օգտին քվեարկած 58500 անձանց մեղքով, այլև **ԿԸՀ, ՏԸՀ և**

Ընտրատեղամասային հանձնաժողովի կողմից իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով, երբ Սահմանադրության 194-րդ հոդվածի և «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի իմպերատիվ պահանջ է, որ ընտրությունների պատշաճ՝ օրինական, ազատ և հավասարության սկզբունքների հիման վրա կազմակերպումը, անցկացումը և **ամփոփումը հանդիսանում է Ընտրական հանձնաժողովների պարտականությունը:**

Մինչդեռ ակնհայտ է, որ մի կողմից ընտրական հանձնաժողովի կողմից իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման (որը դրսևորվել է 20:00-ից հետո ընտրական տեղամաս մուտք գործել և քվեարկել թույլատրելու ձևով), ապա ՏԸՀ-ի կողմից դրան տված և արդյունքում անվավեր ճանաչված գնահատականի և նման գործիքակազմի կիրառումից հետո ԿԸՀ-ի կողմից վերաքվեարկություն անցկացնելու որոշում չընդունելու պատճառով **բացասական հետևանքները կրում է բացառապես Դիմող քաղաքական ուժը և նրա օգտին քվեարկած բոլոր անձինք**, քանի որ հենց այդ ընտրական տեղամասերի արդյունքների անվավեր ճանաչվելու արդյունքում է, որ պայմանավորված անճշտությունների քանակի ավելացմամբ և Դիմողի օգտին քվեարկությունների թվի նվազմամբ, Դիմողը զրկվում է Ազգային ժողովի մանդատների բաշխմանը մասնակցելու երաշխիքից, քանի որ նախքան Պատասխանողի կողմից 254-Ա և 255-Ա որոշումների ընդունումը երաշխավորված էր Դիմողի՝ մանդատների բաշխմանը մասնակցելը, իսկ 254-Ա և 255-Ա որոշումների ընդունումից հետո երաշխավորված էր մանդատների բաշխմանը մասնակցելու հնարավորությունը՝ պայմանավորված օրենսդրական կարգավորումների ուժով վերաքվեարկություն անցկացնելու իմպերատիվ պահանջով, քանի որ ակնհայտ է, որ վկայակոչված երկու ընտրական տեղամասերում ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչումը և դրա հիմքը էական ազդեցություն են ունեցել ընտրությունների արդյունքների վրա՝ ուղղակիորեն պայմանավորելով Դիմողի՝ Ազգային ժողովում ներկայացվածությունը կամ դրա բացառումը՝ հանգեցնելով ընտրողների՝ իշխանության իրացման ձևավորման Սահմանադրական երաշխիքի, Ազգային ժողովի ձևավորման սկզբունքների, **58500 ընտրողի** ակտիվ ընտրական իրավունքի և Դիմողի՝ պասիվ ընտրական իրավունքի խախտման՝ պետական մարմինների կողմից իրենց լիազորությունների ոչ պատշաճ իրականացման արդյունքում:

4. ԿԸՀ-ն սխալ է գնահատել 255-Ա և 256-Ա որոշումների հետևանքները, ներառյալ ընտրությունների վրա ազդեցությունը

Պատասխանողը, ներկայացված զատ, սխալ հաշվել և ըստ այդմ սխալ է գնահատել իր իսկ կողմից կայացված 255-Ա և 256-Ա **որոշումների հետևանքները**:

Մասնավորապես՝ Դիմումի փաստական հանգամանքներում ներկայացված թվաբանական տվյալներից ակնհայտ է դառնում, որ Դիմող կուսակցությունը նախքան 255-Ա և 256-Ա որոշումների կայացումը և կամ այն դեպքում, եթե 255-Ա և 256-Ա որոշումները չկայացվեին, մասնակցելու էր Ազգային ժողովի մանդատների բաշխմանը և ներկայացված էր լի-

նելու ՀՀ Ազգային ժողովում առանձին խմբակցությամբ, Ազգային ժողովում ԿԸՀ-ի կողմից 2026թ հունիսի 14-ի որոշմամբ սահմանված երեք քաղաքական ուժերի փոխարեն ներկայացված էր լինելու 4 քաղաքական ուժ:

Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածը սահմանում է նշված դեպքում հնարավոր որոշումները: Համաձայն նշված կարգավորման

> *«1. Եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել սույն **օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա**, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում **առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները**: Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա Ազգային ժողովի ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:»*

Այսինքն ԿԸՀ-ն պետք է անդրադառնար հետևյալ երկու հարցերին

- **Արդյո՞ք խախտումներն ազդել են արդյունքների վրա** (պատասխանը դրական է, քանի որ հենց ԿԸՀ-ն է որոշել որ դրանք ազդում են և այդ հիմքով է անվավեր ճանաչել քվեարկության արդյունքները, իսկ նշված գործողությունն էլ իր հերթին բացառել է ԲՀԿ-ի կողմից անցողիկ շեմը հաղթահարելը)
- **Արդյո՞ք հնարավոր է շտկել այդ խախտումները կոնկրետ ընտրատեղամասերում վերաքվեարկություն իրականացնելով** (այս հարցին որոշման մեջ անդրադարձ չկա, բայց ԿԸՀ նախագահի կողմից տրված պարզաբանումը պարունակում է պնդում, որ նման հնարավորություն չկա՝ հղում անելով տակտիկական քվեարկութայն ռիսկի վրա):
- Եթե նախորդ հարցի պատասխանը դրական է, ապա պետք է առանձին տեղամասերում նշանակվի վերաքվեարկություն, իսկ եթե բացասական է, ապա նշված հոդվածը նախատեսում է այլ որոշում – **ԱԺ ընտրություններ ամբողջությամբ են անվավեր ճանաչվում և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:**

Այսինքն՝ 255-Ա և 256-Ա որոշումների կիրառման և դրա արդյունքում վերաքվեարկություն անցկացնելու որոշում չընդունելու հետևանքով ակնհայտորեն խախտվել են Սահմանադրության 2-րդ հոդվածով նախատեսված իշխանության ձևավորման, ընտրությունների՝ ազատ,(արդար) և ուղղակի անցկացման սկզբունքները, Ազգային ժողովում բազմակարծության, ավելի մեծ թվով ներկայացվածության հնարավորությունը, Դիմողի և դիմողի օգտին քվեարկած անձանց իրավունակության դրսևորման բարձրագույն միջոցը՝ քվեն, ինչով

պայմանավորված հիմնավոր, օբյեկտիվ և փաստարկված կասկակի տակ են դրվել ընտրությունների արդյունքների ամփոփման օրինականությունը: Նշված որոշումը հակասում է նաև Ընտրական օրենսգրքի 101-րդ և 95-րդ հոդվածներով սահմանված կարգավորումներին:

Ամփոփելով այս բաժինը, պնդում ենք, որ ԿԸՀ-ն՝ Ընտրական Օրենսգրքի 48.1 հոդվածի լայն և հակասահմանադրական մեկնաբանության արդյունքում իրեն վերապահել է Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի փոխարեն ընտրության քվեարկության արդյունքներն (ընդ որում որևէ բողոքի բացակայության պայմաններում) անվավեր ճանաչելու իրավասություն և դրանից հետո էլ, երբ ակնհայտ է եղել որ որոշումներն ազդում են ընտրության արդյունքների վրա (մինչև որոշումները ԲՀԿ-ն ստանում էր 4 տոկոս, որոշումների արդյունքում՝ չի ստանում) վերաքվեարկություն նշանակելու կամ ընտրություններն ամբողջությամբ անվավեր ճանաչելու փոխարեն որոշում է ընդունել մանդատեր բաշխելու մասին՝ գործընթացից բացառելով ԲՀԿ-ին:

III. Դիմողի փաստարկները նախընտրական քարոզչության շրջանում ընտրություններին մասնակցող կառավարող ուժի և նրա գործադիր մարմնի ղեկավարի կողմից իրականացված խախտումների արդյունքում ընտրությունների ազատության և հավասարության սկզբունքների խախտումների մասով

Սույն բաժնում մանրամասն անդրադառնում ենք ընտրությունների ընթացքում տեղի ունեցած խախտումներին (դրանց մի մասին, քանի որ խախտումներն իրականում բազմաբնույթ են և բողոքարկման ժամկետի սահմանափակ լինելու արդյունքում անդրադարձ է կատարվում միայն մի մասին), ինչպես նաև կհիմնավորվի, որ նշված խախտումներն ազդել է ընտրությունների արդյունքների վրա, առնվազն ազդել էն Դիմողի՝ Ազգային Ժողովի մանդատներ ստանալու հարցին:

1. Ընտրությունների օրինականության (ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ) որոշման համար կիրառելի իրավական նորմերը և կիրառելի ստանդարտը

Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝

*«Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, **հավասար, ազատ** և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ **գաղտնի քվեարկությամբ**:»*

Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:»

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն՝

«բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս:»

«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» Կոնվենցիայի (այսուհետև՝ **Կոնվենցիա**) **8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝**

«1. Սահմանադրության գերակայությունը ազատ ընտրությունների անցկացման և առանց որևէ ազդեցության, բռնության, բռնության կիրառման սպառնալիքի կամ այլ անօրինական ներգործության, օրենքով թույլատրված ձևերով և օրինական մեթոդներով ընտրություններին մասնակցելու կամ չմասնակցելու՝ քաղաքացիների և ընտրական գործընթացի մյուս մասնակիցների՝ ընտրություն կատարելու հնարավորության ապահովման (չվախենալով պատժից կամ որևէ ազդեցությունից՝ ինչպիսին էլ լինեն քվեարկության և ընտրության արդյունքները), ինչպես նաև ընտրական ողջ գործընթացի ընթացքում ազատ ընտրությունների սկզբունքի պարտադիր պահպանման իրավական և այլ երաշխիքների հիմքն է:»

Կոնվենցիան ՀՀ-ում ուժի մեջ է մտել 17.03.2005թ, և ՀՀ-ն Կոնվենցիայի մասնակից է:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«3. թեկնածուն, քաղաքական կուսակցությունը (դաշինքը) և ընտրական գործընթացի մյուս մասնակիցները պատասխանատվություն են կրում հասարակության և պետության առջև՝ Սահմանադրությանը և օրենքին համապատասխան: Ոչ մի թեկնածու, ոչ մի քաղաքական կուսակցություն (դաշինք), ոչ մի այլ հասարակական միավորում կամ կազմակերպություն իրավունք չունի օգտագործելու հոգեբանական, ֆիզիկական, կրոնական հարկադրանքի մեթոդներ կամ բռնության կոչեր, բռնության կիրառման սպառնալիքներ կամ ցանկացած այլ տեսակի հարկադրանք:»:

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Ազգային ժողովի, համայնքների ավագանիների, համայնքների ղեկավարների, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված համայնքների ղեկավարների, ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:»:

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:»:

Նշված իրավական ակտերի համակարգային վերլուծությունից ակնառու է, որ **«ազատ ընտրություններ»** իրավաբանական եզրույթը ներառում է պետության պարտականություն ապահովելու թեկնածուի, քաղաքական կուսակցության (դաշինքի) և ընտրական գործընթացի մյուս մասնակցի պատշաճ վարքագիծը՝ բացառելով վերջիններիս կողմից հոգեբանական, ֆիզիկական, կրոնական հարկադրանքի մեթոդների օգտագործումը կամ բռնության կոչերը, բռնության կիրառման սպառնալիքները կամ ցանկացած այլ տեսակի հարկադրանքը:

Հաշվի առնելով, որ ՀՀ-ի կողմից պատշաճ կարգով վավերացված պայմանագրերը ՀՀ օրենսդրության անբաժանելի մաս են, «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» Կոնվենցիայով, ՄԻԵԿ-ով (ՄԻԵԴ-ի տրված մեկնաբանությամբ) կանոնները ևս պարտադիր են, ու ենթակա են կիրառման իրավահարաբերությունների մասնակիցների կողմից:

«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված կանոնը իմպերատիվ է և հետևաբար ներառում է ներպետական ընտրական գործընթացները, այդ թվում նախընտրական քարոզչության ժամանակահատվածը, ու ենթակա է կիրառման իրավահարաբերությունների մասնակիցների կողմից: Նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման իրավական հետևանքները սահմանված են **«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասով,** մինչդեռ եթե նման միջոցներ չեն ձեռնարկվել, դա չի բացառում Սահմանադրական դատարանի առջև վկայակոչված հիմքի բարձրաձայնումը և դրա հիմնավորվածությունը:

2. ԿԸՀ-ի կողմից ՔՊ քարոզարշավի ժամանակ բռնության կոչերի մասով ԿԸՀ-ի սխալ եզրահանգումներ (եզրահանգումների բացակայություն)

Ինչպես արդեն նշվել է դիմումի փաստական հանգամանքներում, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գործադիր մարմնի ղեկավար և պատգամավորի թեկնածու, ՀՀ Վարչապետ հանդիսացող Նիկոլ Փաշինյանը նախընտրական քարոզարշավի շրջանակներում քարոզարշավի օրերին ակնհայտորեն կատարել է բռնության կոչեր պարունակող, վիրավորական, անձանց պատիվն ու արժանապատվությունը վիրավորող արտահայտություններ, հնչեցրել իրական սպառնալիքներ, ատելության և բռնության կոչեր:

Այսինքն՝ քարոզարշավի ընթացքում ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող և պատգամավորի թեկնածու հանդիսացող Նիկոլ Փաշինյանի կողմից նշված արտահայտությունների հնչեցնումը հանգեցնում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջի խախտման, այն է՝ վերջինիս կողմից՝ օգտագործվում են հոգեբանական, ֆիզիկական, կրոնական հարկադրանքի մեթոդներ, բռնության կոչեր, բռնության կիրառման սպառնալիքներ, ինչն էլ աներկբայորեն համարվում է նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում:

Սույն գործով առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումների հետևանքների վերացման անհնարինություն, իսկ հնչեցրած սպառնալիքների ազդեցությունը հոգեբանական բնույթի է՝ ակնհայտ իրավական սպառնալիքի համադրմամբ, այն մերթ հասցեագրված է անորոշ թվով անձանց, մեկ կոնկրետ քաղաքական գործունեությամբ զբաղվող անձանց, որպիսի պայմաններում հետևանքի վերացումը անհնար է, ավելին՝ դրանք կրում են պարբերաբար՝ շարունակական բնույթ, ընդ որում՝ ըստ էության ավելի սաստկացող՝ սպառնալիքների և վախի միջոցով էականորեն ազդելով ընտրողների ազատ կամքի վրա, իսկ քարոզարշավի ավարտին մնացել է ընդամենը 3 օր:

Դրանից զատ՝ աներկբա է, որ վարչապետի պաշտոնակատար հանդես եկող Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցրած սպառնալիքները հասարակության կողմից ընկալվում են որպես իրական, քանզի դրանք կատարվել են պաշտոնատար անձի կողմից, կատարվել են Հայաստանի վարչապետի պաշտոնը զբաղեցնողի կողմից, կատարվել են պարբերաբար, դրանցից մի մասին հետևել են քրեական վարույթների նախաձեռնումները, խուզարկությունները, ձերբակալությունները, վարչական ներգործողության միջոցները, ուստի, ակնառու է, որ հասարակության և հետևաբար ընտրությունների վրա, պայմանավորված տարածված սպառնալիքի մթնոլորտով, դրանք էական ազդեցություն են ունենալու, այդթվումև՝ ընտրությունների արդյունքների վրա:

Ընդ որում՝ նկարագրված հայտարարությունների արդյունքում ոչ միայն ուղղակիորեն և անուղղակիորեն սահմանափակվել է անորոշ շրջանակով անձանց ընտրական իրավունքը՝ դրա վրա էֆֆեկտիվ ներազդման արդյունքում, այլև ըստ էության վնաս է հասցվել նաև թե՛ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, թե՛ անձամբ կուսակցության ղեկավարին, քանի

որ տարածված ատելության խոսքի և այլ անթույլատրելի վարքագծի հետևանքով խախտվել է ընտրություններին մասնակցելու դիմումատուների սահմանադրական ազատությունը՝ հավասարության և արդարության բաղադրատարրերի միաժամանակյա ապահովման տեսանկյունից. վարչական ռեսուրսներով և լիազորություններով օժտված կառավարության ղեկավարն վիրավորանք, ատելության ու բռնության խոսքի, անմեղության կանխավարկածի խախտման, առանց օրինական ուժի մեջ մտած դատական ակտի սեփականազրկման սպառնալիքների միջոցով խաթարել է մրցակցության և ազատության Սահմանադրական երաշխիքները և կամ այնպիսի ներգործություն է ունեցել ընտրողների ազատ կամքի վրա, որը որպես հետևանք, կարող է էականորեն ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Դրանից զատ, իրականությանը չհամապատասխանող հայտարարության և դրան հաջորդած գործողությունների արդյունքում ևս «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը զրկվել է ընտրությունների ընթացքում ազատ և հավասար պայմաններով մասնակցելու հնարավորությունից, քանի որ իշխող քաղաքական ուժի գործադիր մարմնի ղեկավար և միաժամանակ ՀՀ Վարչապետ հանդիսացող Նիկոլ Փաշինյանի կողմից անդադար հնչեցվող և շարունակական բնույթ կրող ատելության ու բռնության խոսքի և իրականությանը չհամապատասխանող հայտարարությունների արդյունքում առաջացել են անհավասար մրցակցության պայմաններ:

3. ԲՀԿ ցուցակի 2-րդ համարը զբաղեցնող Անդրանիկ Թևանյանի հետ կապված գործընթացների մասով

Ավելին, Դիմող կուսակցության նախընտրական ցուցակի երկրորդ համարում գրանցված պատգամավորի թեկնածու, «Մայր Հայաստան» կուսակցության գործադիր մարմնի ղեկավար Անդրանիկ Թևանյանին վերջինիս կողմից չկատարված արարքում մեղադրելը այն պայմաններում, երբ անգամ առաջադրված մեղադրանքը չի համապատասխանում Քաղաքացիական պայմանագրի պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցված և բազմիցս ներկայացված հայտարարություններին, մինչդեռ հենց նման շարունակական և չդադարող խախտումն է, որ կարող էր հանգեցնել Դիմողի կողմից իրականացվող նախընտրական քարոզչության արդյունավետության անկման, հատկապես այն պայմաններում, երբ, օրինակ, Անդրանիկ Թևանյանը, գտնվելով կալանքի տակ, չէր կարող ոչ միայն ինքնուրույն իրականացնել իր քարոզարշավը (այլ ոչ թե միջնորդավորված՝ վստահված անձանց միջոցով), այլև պաշտպանվել հնչվեցվող, սակայն իրականությանը չհամապատասխանող հայտարարություններից:

Այսպես, մի շարք հանրային հրապարակումներում (ներառյալ ԱԱԾ ներկայացված հաղորդման մեջ, ինչի մասին և հաղորդագրություն հրապարակված է Քննչական կոմիտեի կայքում) նշվել է, որ իբր թե Անդրանիկ Թևանյանը փոխանցել է պետական գաղտնիք կազմող տեղեկատվություն, այնինչ հետագայում նրան առաջադրված մեղադրանքում բացակայում է պետական գաղտնիք կազմող տեղեկատվության հետ կապված որևէ գործողություն

(հավաքագրում, փոխանցում և այլն): Չնայած դրան, և Անդրանիկ Թևանյանը և փաստաբանները ծանուցվել են (ստորագրել են) այն մասին, որ **հնարավոր է, գործի նյութերում լինի պետական գաղտնիք կազմող տեղեկատվություն (առայժմ ադպիսի տեղեկատվություն հասանելի չի եղել) և հավելյալ սահմանափակել են հրապարակային պաշտպանվելու հնարավորությունը:**

Արդյունքում, առնվազն **Սահմանադրական բողոքի քննության համար անհրաժեշտ շեմի տեսակետից ապացուցված պիտի համարվի** այն պնդումը, որ եթե Անդրանիկ Թևանյանի վերաբերյալ չլինեին իրականությանը չհամապատասխանող և որպես վարչապետ հանդես եկող Նիկոլ Փաշինյանի հայտարարությունները, ապա առնվազն ակնհայտ է, որ մայիսի 21-ից քրեադատավարական հարկադրանքի ենթարկված Անդրանիկ Թևանյանի կողմից քարոզարշավին ամբողջությամբ մասնակցելու դեպքում առավել քան հավանական է և փաստացի երաշխավորված է, որ Դիմողը կստանար էականորեն ավելի քան 153 ձայնով ավելի, քան արձանագրված է Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի՝ 2026 թ. հունիսի 14-ին կայացրած «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները վերաբերյալ» 258-Ա որոշմամբ: Ավելորդ չէ վկայակոչել նաև, որ Անդրանիկ Թևանյանի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման և նրա հասցեին Նիկոլ Փաշինյանի կողմից հնչող արտահայտությունների հետևանքով ոչ միայն Անդրանիկ Թևանյանը անձամբ, այլև համախոհներից շատերը ի զորու չեն եղել ամբողջությամբ ներգրավվելու նախընտրական քարոզարշավում:

Այս համատեքստում նաև էական է ԿԸՀ-ի կողմից ընտրությունների օրինական ընթացքն ապահովող գործառույթներից մեկի՝ քրեական հետապնդում հարուցելու և ազատազրկմանը համաձայնություն տալու լիազորության ոչ պատշաճ կատարումը: Փաստացի, համապատասխան գործընթացը կրում է ձևական բնույթ: Եղել են բազմաթիվ փորձեր (ներառյալ Անդրանիկ Թևանյանի վերաբերյալ դիմումներով) ստանալ պարզաբանում նշված վարույթի քննարկման և ապացուցման առարկայի մասին, բայց ստացվել են բացառապես բացասական պարզաբանումներ առ այն, որ ԿԸՀ-ն իրավական հարցեր չի քննարկում, քաղաքական հարցեր չի քննարկում և փաստացի ապահովում է բացառապես (- **(ա)** նյութերի հետ ծանոթացում և **(բ)** լսված լինելու իրավունք (առանց պարզաբանելու՝ որ հացի վերաբերյալ):

Այնինչ, նշված գործով, բովանդակային քննարկում իրականացնելու դեպքում պարզ կլիներ, որ ԿԸՀ պետք է մերժեր համաձայնություն տալ, քանի որ բացակայել է որևէ հրատապություն, և առնվազն ԿԸՀ դիմելուց երկու օր առաջ մեկ այլ քաղաքական ուժի (ՔՊ) առաջնորդն արդեն իսկ բարձրաձայնել էր գործի մասին, իսկ գործով վերջին բովանդակային գործողությունը (չհաշված ԿԸՀ դիմելուն անմիջապես նախորդող գործողությունները) տեղի էին ունեցել ավելի քան մեկ տարի առաջ: Ակնհայտ էր, որ գործընթացը ուներ մեկ նտապակ՝ **խաթարել դիմողի արդյունավետ մասնակցությունը ընտրություններին, իսկ ԿԸՀ-ն**

ունենալով գործիք կասեցնել նման խախտումը, կրավորական տարբերակով տվել է համաձայնություն (նման ոճով բոլոր դիմումներն առանց բացառության հաստատվել են ԿԸՀ-ի կողմից): Ընդ որում, ինչպես նշվեց, այդ որոշումներից որևէ մեկը չի պարունակում հիմնավորում, որը հնարավորություն կտար արդյունավետ պաշտպանվել:

4. ՀՌՀ եզրահանգումների մասով

ՀՌՀ-ն, համաձայն Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն ունի հետևյալ լիազորությունը՝

> *«Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Ազգային ժողովի ... ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 2 օր առաջ հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում սույն հոդվածի պահանջների կատարման մշտադիտարկման արդյունքները և հանձնաժողովի եզրակացությունը՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության **սահմանված կարգի պահպանման վերաբերյալ**:»*.

Նշված կարգավորումից պարզ է, որ ՀՌՀ-ն ունի լիազորություն (իրավունք և պարտավորություն) կազմել եզրակացություն կարգը պահպանելու վերաբերյալ, կամ արձանագրել խախտումները (և նաև կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե կիրառելի է): **ՀՌՀ-ին որևէ նորմ չի լիազորում գնահատել նշված խախտումների ազդեցությունը ընտրությունների արդյունքների վրա:** Նշված լիազորությունը (գնահատելը) ԿԸՀ-ի լիազորություն է, և ԿԸՀ-ն պարտավոր է նշված խախտումների ազդեցությունը գնահատել ինքնուրույն:

Այնինչ, սույն դեպքում, ԿԸՀ-ն ընդամենը վերարտադրել է ՀՌՀ-ի եզրակացությունը, բայց չի անդրադարձել այնտեղ արձանագրված ակնհայտ խախտման փաստին և գնահատակին՝

չկատարելով իր լիազորությունը՝ գնահատելու ընտրությունների արդյունքների վրա ՀՌՀ-ի կողմից արձանագրված խախտումների ազդեցությունը (որպիսի լիազորություն ունի ԿԸՀ-ն, Վարչական դատարանը և Սահմանադրական դատարանը), հիմք է ընդունել ՀՌՀ-ի կողմից իր լիազորություններից չբխող եզրակացությունը, որով ըստ էության հերքվել է հենց ՀՌՀ-ի կողմից ազատության ու հավասար մրցակցության խախտման պայմաններում դրանց ազդեցությունը ընտրությունների արդյունքերի վրա: Այսպես, ՀՌՀ-ն արձանագրել էր, որ լրատվականներով անհավասար լուսաբանումը առաջ է բերում *«ընտրական օրենսդրության հիմնարար սկզբունքներից մեկի՝ 80 կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև **հավասարության սկզբունքի խախտմանը**, քանի որ կողմնակալ լուսաբանումը կամ ոչ*

օբյեկտիվ գնահատականները հասարակության համար ձևավորում են կանխակալ պատկերացումներ՝ ***խաթարելով ազատ և հավասար մրցակցային միջավայրը****:»*

ԿԸՀ-ն նշված խախտմանը որևէ գնահատական չի տվել, չի պատճառաբերել, այնինչ ակնհայտ է, որ նշված խախտումները այլ խախտումների հետ համատեղ ակնհայտ ազդել են արդյունքների վրա:

5. Վարչական ռեսուրսի կիրառման և այլ խախտումների այլ օրինակներ

Բացի այդ, որպես ընտրությունների վրա ուղղակիորեն ազդած վարչական ռեսուրսի կիրառում հայտնում ենք, որ իշխող քաղաքական ուժը ակնհայտորեն ընտրությունների արդյունքների վրա ազդելու նպատակով ըստ էության ուղղակիորեն չարաշահել է իր լիազորությունները, մասնավորապես՝

5.1. 2025թ դեկտեմբերի 03-ին հանդես գալով Ազգային ժողովի առջև, Քաղաքացիական պայմանագիր կուսակցության կողմից գրանցված պատգամավորի թեկնածու, ՀՀ Վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով թոշակները չբարձրացնելու ընդդիմության հարցերին, հայտնել էր, որ «Թոշակառուների թոշակը ամսական 10 հազար 400 դրամով ավելացնենք, ի՞նչ ա անելու թոշակառուն»,

5.2. 2026թ փետրվարի 06-ին ՀՀ նախագահը ստորագրել է հրամանագիր՝ Ազգային ժողովի հերթական ընտրությունը 2026 թվականի հունիսի 7-ին նշանակելու մասին,

5.3. արդեն 2026թ. փետրվարի 25-ին Նիկոլ Փաշինյանը հայտարարել է թոշակների բարձրացման մասին, որը տեղի է ունենալու ապրիլի 1-ից:

5.4. Ընդ որում, որևէ հիմնավորում և պատճառաբանություն, քան նախընտրական շրջանում ընտրական գործընթացների վրա ազդելը, այլ իրողություն չի կարող ունենալ, քանի որ <u>երեք ամսվա տարբերությամբ որևէ պետություն չի կարող արձանագրել այնպիսի տնտեսական աճ, որը թույլ տա կայացնել իրար տրամագծորեն հակառակ որոշումներ</u>, ինչով իսկ ակնհայտ է դառնում, որ կենսաթոշակների բարձրացումը միտված է եղել բացառապես կենսաթոշակառու հանդիսացող և նրանց հետ փոխկապակցված անձանց իշխող քաղաքական ուժի օգտին քվեարկել շահագրգռելուն: **Ընդ որում, թոշակների աճը նախատեսվել է ոչ թե պետական բյուջեի շրջանակներում (որտեղ ավելացումը նախատեսված չի եղել), այլ Կառավարության լիազորությունների շրջանակներում:**

5.5. Միաժամանակ, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վարչական ռեսուրսի *չարաշահումը* ունեցել է այլ դրսևորումներ ևս, օրինակ՝ <u>Քաղաքացիական պայմանագիր կուսակցության պատգամավորի թեկնածու, նախընտրական ցուցակի 61-րդ համար, Թալինի համայնքապետ Տավրոս Սափեյանը</u> **11.5 միլիոն դրամի օգնություն է** տրամադրել, որից 3 մլն դրամը, օրինակ, համայնքապետարանը փոխանցել վաճառողին՝ բնակիչներից մեկի համար տուն գնելու նպատակով, 626 հազար դրամ է տրամադրվել 14

տարբեր անձանց կարիքների՝ սննդի, ջրի, էլեկտրականության ծախսերի, դեղորայքի համար: Ընդ որում, օգնությունը ոչ թե ուղիղ բնակչին է փոխանցվել, այլ այդ գումարները տրվել են էլցանցին, «Վեոլիա ջրին», դեղատանը, իսկ սննդի գումարը՝ անհատ ձեռներեցի, որն էլ սնունդ է գնել կարիքավորների համար, 8 միլիոն դրամ էլ հատկացվել 47 աշակերտների և նրանց ուղեկցող երեք անձանց Վրաստան ուղարկելու համար:

5.6. Համանման արտոնություններ են տրվել նաև Գեղարքունիքի մարզի Մարտունու ավագանու կողմից 2026թ ապրիլի 30-ի 84-Ա, Համայնքի ղեկավարի 2026թ. մայիսի 11-ի 615-Ա, և 2026թ մայիսի 15-ի 648-Ա որոշումներով:

5.7. Հարկ է նշել, որ դրանից համանման փաստերի առնչությամբ, օրինակ, Հակակոռուպցիոն կոմիտեն խուզարկություններ է իրականացրել «Հայաստան» դաշինքի նախընտրական շտաբներում, մասնավորապես՝ Աշտարակում, ինչպես նաև՝ Դաշնակցության գերագույն մարմնի անդամ, ԱԺ պատգամավոր Աշոտ Սիմոնյանի բնակարանում, երբ ըստ Հակակոռուպցիոն կոմիտեի, 15000 դրամ է տրվել դպրոցի շրջանավարտներին:

5.8. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական բովանդակությամբ պատկերներ պարունակող ավտոբուսը մեծ հաճախականությամբ կայանված է եղել Կառավարական տուն 1 հասցեի կայանատեղիում (կայանատեղին նախատեսված է կառավարության տրանսպորտային միջոցների համար),

5.9. Սրանից բացի, իշխող քաղաքական ուժի կողմից Կապան քաղաքում (մայիսի 9-ին), Վանաձոր քաղաքում (մայիսի 20-ին) և Երևան քաղաքում (հունիսի 5-ին) կազմակերպված նախընտրական հանրահավաքները ուղեկցվել են «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից կատարված դրոնների շոուով և հենց նույն ժամանակահատվածում մայիսի 16-ին նույն կազմակերպության կողմից Հանրապետության հրապարակում կազմակերպվել է համերգային միջոցառում Ուսանողների և Երիտասարդության օրվա կապակցությամբ, որը ևս ուղեկցվել է դրոնների շոու-միջոցառմամբ: Նշված միջոցառման ժամանակ տեսանելի է եղել ՔՊ-ի նախընտրական նշանները (պաշտոնական կամ ոչ, երկրորդային նշանակություն ստացած սիմվոլները):

5.10. Վարչական ռեսուրսները, մասնավորապես՝ իշխող քաղաքական ուժի ղեկավարման ներքո գտնվող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներն անգամ աշխատանքային ժամերին զբաղված են եղել նախընտրական քարոզարշավով և իշխող քաղաքական ուժի պաստառները փակցնելով՝ Ընտրական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2.1-րդ մասով արգելված վայրերում առևտրի կետերում. Սա առավել համակարգված է իրականացվել հատկապես առավել մեծ թվով ընտրողներ ունեցող համայնքում՝ Երևանում, ուր թաղապետարանի աշխատակիցներն են ներգրավված եղել նման ապօրինի գործունեության մեջ. նման դեպքեր արձանագրվել են Երևանի գրեթե բոլոր վարչական շրջաններում, օրինակ՝ Կենտրոն վարչական շրջանում հատկապես Մ. Խորենացու և Տ. Մեծ փողոցների առևտրային սրահների վրա, Մեծամոր

համայնքում, երբ ուսանողներին անվճար փոխադրող ավտոբուսի վրա է փակցված եղել իշխող քաղաքական ուժի պաստառը[5]:

5.11. Սրանից զատ, վկայակոչում ենք, որ վարչական ռեսուրսի չարաշահման ռիսկը և իրական ազդեցությունը արձանագրվել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ **միջազգային դիտորդական** առաքելության կողմից, որի հայտարարությամբ հստակ արձանագրվել է, որ ոչ հավասար մրցակցային պայմաններ են ստեղծվել կուսակցության և պետական համակարգի սերտաճման բարձր ռիսկի և իշխող քաղաքական ուժի նախընտրական միջոցառումների պետական ծառայողներին մասնակցելու ճնշումների պատճառով. ըստ էության արձանագրվել է, որ պետության և իշխող կուսակցության միջև սահմանագիծը հաճախ եղել է միաձուլված՝ խախտելով օրենսդրության այն պահանջը, ըստ որի՝ պաշտոնատար անձինք պետք է տարանջատեն իրենց ծառայողական պարտականությունները նախընտրական քարոզչությունից:

5.12. «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը իր հերթին ևս արձանագրել է, որ ԿԸՀ-ի կողմից անվավեր ճանաչված ընտրատեղամասերում վերաքվեարկություն չանցկացնելը ապօրինի և հակասահմանադրական է:

5.13. Վարչական ռեսուրսի *չարաշահման* առանձին և համակարգված չարաշահման ամենացայտուն դրսևորումը 2026թ մայիսի 28-ին (նախընտրական քարոզարշավի ընթացքում) «Խաղաղություն», «Տեր եմ խաղաղությանը» կարգախոսներով հանդես եկող կուսակցության ղեկավարի կողմից ռազմական շքերթի անցկացումն էր այն դեպքում, երբ 2016թ-ից ի վեր ՀՀ-ում ռազմական շքերթներ չէին կազմակերպվել:

5.14. Վերոգրյալով պայմանավորված՝ ակնհայտ է դառնում, որ վարչական ռեսուրսների բացահայտ, շարունակական և անխոչընդոտ չարաշահումը, ֆինանսական ռեսուրսների և ասոցացվող միջոցառումների արդյունքում ընտրողների կամքի վրա ազդեցությունը կրել է այնպիսի պարբերաբար, ոչ իրավաչափ, օրենքով արգելված ու կազմակերպված բնույթ, որ ուղղակիորեն խախտել է ընտրությունների հավասարության և ազատության սկզբունքը՝ հանգեցնելով դրա արդյունքների անվավերության հիմքերի հաստատական առկայությանը:

6. Եզրահանգումներ նախընտրական քարոզչության շրջանում ընտրություններին մասնակցող կառավարող ուժի և նրա գործադիր մարմնի ղեկավարի կողմից իրականացված խախտումների արդյունքում ընտրությունների ազատության և հավասարության սկզբունքների խախտման վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա, ակնհայտորեն հիմնավորվում է, որ ՀՀ վարչապետ և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու հանդիսացող Նիկոլ Փաշինյանի հայտարարությունների, շարունակակական, վերջինիս կողմից չդադարող

[5] https://www.youtube.com/watch?v=SgvOLsljJXU

վիրավորանքի և ատելության խոսքի, զրպարտությունների և իրականությանը չհամապատասխանող հանրային զգայուն թեմաների վերաբերյալ հայտարարությունները բացառել են հավասար ու ազատ պայմաններում նախընտրական քարոզչություն, ինչից զատ ազատությունից զրկված Անդրանիկ Թևանյանի և իր գլխավորված քաղաքական ուժը, որը ներկայացված է Դիմող կուսակցության նախընտրական ցուցակում, ի զորու չի եղել ամբողջությամբ ներգրավված լինել նախընտրական քարոզչությանը, մինչդեռ առնվազն ողջամիտ կասկածի շեմից վեր է, որ եթե վարչական ու վերահսկողական լծակներով օժտված իշխող քաղաքական ուժի կողմից կատարված խախտումները շարունակական և այս ծավալների ու բնույթի չլինեին, ապա Դիմող կուսակցությունը միանշանականորեն կունենար շատ ավելի մեծ թվով կողմ քվեարկության արդյունքներ, քան արձանագրված է ԿԸՀ որոշմամբ:

IV. Եզրահանգումներ և Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը

Բա՛րձր Դատարան,

Սույն դիմումով ներկայացված փաստերի, հիմքերի և հիմնավորումների համակարգային և ամբողջականացված վերլուծությամբ ուղղակիորեն փաստվում է, որ Ազգային ժողովի՝ 2026թ հունիսի 7-ին տեղի ունեցած ընտրությունների նախընտրական քարոզարշավի փուլը, արդյունքներն ու դրա ամփոփումը՝ որպես վերջնարդյունք, չի ապահովել Սահմանադրության 2-րդ հոդվածով նախատեսված **ժողովրդի իշխանության իրացման լեգիտիմ, օրինական, ազատ ու հավասար սկզբունքները**, մասնավորապես՝ ամբողջ քարոզարշավը ուղեկցվել է իշխող քաղաքական ուժի պատգամավորի թեկնածուի կողմից ատելության ու բռնության կոչերի, հանրային զգայուն թեմաներում իրականությանը չհամապատասխանող տվյալների ներկայացմամբ:

Դրանից զատ, Դիմողի համար առանցքային նշանակություն ունեցող և Դիմող կուսակցության նախընտրական ցուցակում ներգրավված քաղաքական ուժի ներկայացուցիչները այդթվումև գործադիր մարմնի ղեկավարի մակարդակով զրկվել են նախընտրական քարոզչությանը ամբողջությամբ և լրիվ ծավալով մասնակցելու հնարավորությունից:

Դրանից զատ, ԿԸՀ-ն, կատարելով այնպիսի գործողություն, որը կատարելու լիազորություն չունի և կայացնելով այնպիսի որոշում, որպիսին կայացնելու լիազորություն չունի, պակասեցրել է Դիմողին օգտին քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ արձանագրելով ընտրատեղամասում (ոչ Դիմողի մեղքով) էական խախտումների առկայությունը:

Դրանից հետո, ԿԸՀ-ն, չկատարելով այնպիսի գործողություն, որը պիտի կատարեր՝ վերացնելու համար արձանագրված խախտումները (առանձին ընտրատեղամասերում վերաքվեարկության նշանակման միջոցով), զրկել է՝

1. Դիմողին Ազգային ժողովի մանդատների բաշխմանը մասնակցելու երաշխիքից, որը պիտի առկա լիներ ընտրությունների արդյունքների նախնական ամփոփման և կատարված վերահաշվարկների արդյունքում և

2. Դիմողին Ազգային ժողովի մանդատների բաշխման մասնակցելու իրավական երաշխավորված հնարավորությունից:

Դրանից զատ, վարչական ռեսուրսների բացահայտ, շարունակական և անխոչընդոտ չարաշահումը, ատելության ու բռնության խոսքը, սպառնալիքներն ու ֆինանսական ռեսուրսների և աֆիլացվող միջոցառումների արդյունքում ընտրողների կամքի վրա ազդեցությունը կրել է այնպիսի պարբերաբար, ոչ իրավաչափ, օրենքով արգելված ու կազմակերպված բնույթ, որ ուղղակիորեն խախտել է ընտրությունների հավասարության և ազատության սկզբունքը՝ հանգեցնելով դրա արդյունքների անվավերության հիմքերի հաստատական առկայությանը:

Ողջ ներկայացվածից ակնհայտ է դառնում, որ տեղի ունեցած խախտումները թե՛ առանձին-առանձին, թե՛ մեկ միասնության մեջ կրում են էական բնույթ և դրանք ուղղակիորեն անդրադարձել են ընտրությունների արդյունքների և մանդատների բաշխման վրա, իսկ ԿԸՀ-ն չի ձեռնարկել միջոցներ դրանք վերացնել փորձելու առնչությամբ՝ անտեսելով ավելի քան 58 500 անձի ազատ կամահայտնությունը որպես ժողովրդի իշխանության իրագործման բարձրագույն և Սահմանադրական միջոց:

Եվս մեկ անգամ անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ ըստ ԿԸՀ-ի (և ԿԸՀ-ի որ իրավաչափ որոշումների ընդունման արդյունքում) Դիմողին չի բավարարել 153 քվե (մոտ 0.25 տոկոս) և վերը նշված խախտումների յուրաքանչյուրը միանշանակորեն ունեցել է ավելի զգալի ազդեցություն: Ընդ որում ԿԸՀ-ի կողմից քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու որոշումների ազդեցությունը միանշանակ և հստակ է, իսկ մնացած խախտումների արդյունքները ենթակա է գնահատման, սակայն միանշանակորեն գերազանցում է 0.25 տոկոսը

Օ.Վերոգրյալով պայմանավորված՝

Բարձր դատարանից՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված լիազորությամբ **անվավեր ճանաչել Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշում(ներ)ը և**

1) **անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները, կամ**
2) **որպես այլընտրանք անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները և սահմանել մանդատների բաշխման կարգը՝ ապահովելով Դիմողի կողմից մանդատների ստացումը**

Կոնցեռն Դիալոգ

V. Կից ներկայացվում են

1. Դիմումատու կուսակցության պետական ռեգիստրի քաղվածքի պատճենը
2. Դիմումատու կուսակցության գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
3. Դիմումատուի կողմից տրված լիազորագիրը,
4. Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի՝ 2026թ հունիսի 14-ի կայացված «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները վերաբերյալ» 258-Ա և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» 259-Ա որոշումների պատճենները,
5. ներկայացուցիչ Արամ Օրբելյանի անձը հաստատող փաստաթղթի և փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենները,
6. ներկայացուցիչ Վահե Գրիգորյանի անձը հաստատող փաստաթղթի և բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենը:

Հարգանքով՝
Դիմումատուի ներկայացուցիչներ

Արամ Օրբելյան

Արամ Օրբելյան

13.06.2026թ

Վահե Գրիգորյան

13/06/2026